

## Ավագանիների վարքագծի կանոնները

- *Ավագանին ձեռավորում է էթիկայի հանձնաժողով, որի նպատակն է վերահսկել Վարքագծի կանոնների իրագործումը: Հանձնաժողովը նաև վարում է գրանցամատյան, ստանում է բողոքներ Վարքագծի կանոնների խախտման վերաբերյալ, որոշում կայացնում գրանցամատյանում գրառումներ կատարելու մասին եւ ձեռնարկում է կարգապահական քայլեր:*
- *Գնումների կամ մատակարարումների պայմանագրերն ընդգրկում են կետ, որի համաձայն պայմանագիրը չեղարկվում է, եթե բացահայտվում է ավագանու կամ ընտրված պաշտոնյայի ներգրավվածությունը,*
- *Ավագանիները երաշխավորում են, որ գերծ կման անձնական ֆիանսական, ընտանեկան շահերի բախումից եւ երաշխավորել, որ այս ամենը հայտնաբերվում, մերկացվում է, գերծ մնալ անվայելուչ կամ անհամապատասխան վարքագծից եւ այլն:*

## Համայնքային ծառայողների, հայեցողական եւ ընտրված պաշտոնյաների համար

1. Տեղական ինքնակառավարման մարմինները՝ ավագանի, համայնքի ղեկավար, համայնքային ծառայող, հայեցողական պաշտոնյաներ (այսուհետեւ՝ ՏԻՄ ներկայացուցիչ) պետք է իրականացնեն իրենց գործառույթները եւ լիազորությունները **բացառապես ի շահ հանրության** եւ ոչ թե առանձին անհատների, խմբերի, կամ անձնական շահի:
2. ՏԻՄ ներկայացուցիչն ընդունում է, որ **իր միակ գործառույթը** իր գործատուին՝ **հանրությանը ծառայելն է**, եւ պարտավոր է շարունակաբար կատարելագործել իր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները՝ բարելավելու համար մատուցվող ծառայությունների որակը:
3. ՏԻՄ ներկայացուցիչը պետք է դրսևորի **օրինակելի վարք**, գերծ մնա անպարկեշտ պահվածքից: Քաղաքացիների նկատմամբ մշտական բարյացակամ եւ կիրթ վերաբերմունքը անբաժանաելի են ՏԻՄ ներկայացուցչի կերպարից:
4. ՏԻՄ ներկայացուցիչը պետք է **գերծ մնա աչառու վերաբերմունքից**, ինչը կարող է կասկածի տակ առնել ՏԻՄ անկողմնակալությունը եւ խաթարել ՏԻՄ-ի նկատմամբ քաղաքացիների վտահությունը:
5. ՏԻՄ ներկայացուցիչը պետք է **գերծ մնա խտրական վարքագծից**, առաջնորդվի հավասարության, մարդու իրավունքների հարգման սկզբունքով:
6. Հարգելով տեղեկատվություն ստանալու քաղաքացիների իրավունքը, ապահովելով թափանցիկ եւ հաշվետու կերպով աշխատելու պահանջը **գերծ մնալ** ի պաշտոնե իրեն հասանելի **տեղեկատվության չթույլատրված բացահայտումից**, որը բխում է անձնական կամ որեւէ խմբային շահից:
7. ՏԻՄ ներկայացուցիչը պետք է **գերծ մնա շահերի բախումից**, երբ ՏԻՄ ներկայացուցչի սեփական շահը գերադասվում է մասնագիտական կամ հանրային շահից:
8. Լիազորությունները վայր դնելու կամ պաշտոնից հրաժարվելու դեպքում ՏԻՄ ներկայացուցիչը **չպետք է իր պաշտոնավարության ընթացքում ձեռք բերած տեղեկությունը կամ կապերը օգտագործի** նոր աշխատավայրում արտոնություններ կամ առավելություն ապահովելու նպատակով:
9. Այն դեպքում, երբ ՏԻՄ ընտրված ներկայացուցիչը քվեարկության դրված հարցի մեջ անձնական, նյութական, դրամական կամ այլ ուղղակի շահ ունի, ապա նա **պետք է այդ մասին հայտնի** ՏԻՄ-ին,

**չպետք է մասնակցի** այդ հարցի վերաբերյալ **բավարկությանը**՝ շահերի բախման դեպքից խուսափելու նպատակով:

10. ՏԻՄ ներկայացուցիչը պետք է ուշադիր լինի **երկու կամ ավելի պաշտոն զբաղեցնելու հետ կապված սահմանափակումներին**: Մասնավորապես, չի կարող ունենալ գործառույթներ, որոնք ենթադրում են վերահսկողություն մեկը մյուսի նկատմամբ:
11. Որոշումներ կայացնելիս ՏԻՄ ներկայացուցիչը պետք է առաջնորդվի ոչ միայն օրենքի տառով, այլև օրենքի ընդհանուր գաղափարով՝ ոգով: Այս առումով յուրաքանչյուր որոշում կայացնելիս պետք է հաշվի առնի իր որոշման էթիկական կողմը, օրինակ՝ որոշումը կարո՞ղ է վնասել որեւէ մեկին կամ խմբին, տվյալ հարցը տնտեսապես նպատակահարմա՞ր է, արդյո՞ք որոշումը հիմնված է լիարժեք տեղեկատվության հիման վրա, որոշման ո՞ր տարբերակն է, որ հաշվի է առնում բոլոր ներգրավված կողմերի շահերը, ո՞ր տարբերակն է, որ ներքին բավարարվածություն կարող է բերել:
12. Կանոնները հրապարակային են եւ հասանելի հանության համար: